Հայտարարություն

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ -ի հինգերորդ և վեցերորդ թողարկման պարտատոմսերի «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ում ցուցակման վերաբերյալ

Սիրով տեղեկացնում ենք Ձեզ, որ 2017 թվականի դեկտեմբերի 8-ին «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հինգերորդ և վեցերորդ թողարկման անվանական արժեկտրոնային դոլարային և դրամային պարտատոմսերը ցուցակվեցին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ում՝ ընդգրկվելով պարտատոմսերի երկրորդային Bbond ցուցակում: Որպես պարտատոմսերի շուկա ստեղծող (market maker) հանդես է գալիս «ՌԵՆԵՍԱ» ՓԲԸ ներդրումային ընկերությունը:

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ»-ի հինգերորդ թողարկման՝ 1 000 000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 3 տարի մարման ժամկետով, արժեկտրոնի 7% եկամտաբերությամբ պարտատոմսերը շրջանառվելու են Բորսայում GLBLB5 հապավմամբ, ինչպես նաև թույլատրվելու է հասցեական և ռեպո գործարքների կնքումը:

Ընկերության վեցերորդ թողարկման՝ 300 000 000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10 000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 1 տարի մարման ժամկետով, արժեկտրոնի 10% եկամտաբերությամբ պարտատոմսերը շրջանառվելու են Բորսայում GLBLB6 հապավմամբ, ինչպես նաև թույլատրվելու է հասցեական և ռեպո գործարքների կնքումը:

Հիշեցնենք, որ սույն թվականի նոյեմբերի 23-ին «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի դոլարային և դրամային պարտատոմսերը հաջողությամբ տեղաբաշխվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում՝ ստանդարտ փակ (եվրոպական) մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով:

Հինգերորդ թողարկման դոլարային պարտատոմսերի համար ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալը կամ ընդհանուր պահանջարկը կազմել է 1,456,410.65 ԱՄՆ դոլար (146%): Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են, որի արդյունքում Ընկերությունը ներգրավել է 1,000,410.65 ԱՄՆ դոլար: Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը եղել է 100 ԱՄՆ դոլար, կտրման եկամտաբերությունը՝ 7%, իսկ միջին կշռված եկամտաբերությունը՝ 6.9846%:

Վեցերորդ թողարկման դրամային պարտատոմսերի համար ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալը կամ ընդհանուր պահանջարկը կազմել է 659,025,879.8 ՀՀ դրամ (220%): Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվել են, որի արդյունքում Ընկերությունը ներգրավել է 300,025,879.8 ՀՀ դրամ: Տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը եղել է 10,000 ՀՀ դրամ, կտրման եկամտաբերությունը՝ 10%, իսկ միջին կշռված եկամտաբերությունը՝ 9.9908%: